

2009թ.

## Տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (Ձև 5)

### Ծանոթագրություն 1. «Իրավական դաշտ»

Վարկային կազմակերպությունների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) կարգավորվում է 2002թ. ընթացքում ընդունված «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից ընդունված նորմատիվ ակտերով: «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնվել է 2003 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությունը գրանցվել է 2003 թվականի ապրիլի 23-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից N 4 արտոնագրային համարով: Կազմակերպության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացումն է:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Երևանում: Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բայրոնի 1:

Աշխատողների միջին թվաքանակը 2009թ. դեկտեմբերի 31-ին կազմել է 14 մարդ (2008թ-ին՝ 15 մարդ):

### Ծանոթագրություն 2. «Հաշվապահական ստանդարտներ»

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող հաշվապահական հաշվառման ստանդարտների: Դրանք կազմված են համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության, որը իր հերթին համապատասխանում է ստանդարտների պահանջներին:

### Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Հաշվապահական հաշվառման իր գրանցումները Կազմակերպությունը վարում է Հայաստանի Հանրապետության դրամով (այսուհետ՝ ՀՀ դրամ) և, կարգավորող մարմիններին ներկայացնելու նպատակով պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և Հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Կազմակերպության հաշվառման գրանցումների վրա: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է ղեկավարությունից կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ներկայացված գումարների վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում: Սույն ֆինանսական հաշվետվությունների գծով առավել նշանակալի գնահատումները վերաբերում են հնարավոր կորուստների պահուստին, մաշվածությանը և ամորտիզացիային և այլ պահուստներին, որոնք բացահայտված են Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան ծանոթագրություններում: Գնահատումները հիմնված են այն տեղեկատվության վրա, որը առկա է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օրվա դրությամբ:

## Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Չաշխատող ակտիվների, վարկերի և փոխաատվությունների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Ոչ տոկոսային ծախսերը ճանաչվում են գործարքների կատարման պահին:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև այլ հիմնական եկամտային և ծախսային հոդվածները, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանց գծով գործառնությունները փաստացի կատարվում են:

## Արտարժույթային գործառնություններ

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժույթային շուկաներում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքները: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են կիրառելով ՀՀ ԿԲ կողմից հաշվեկշռի ամսաթվի դրությամբ հրապարակված միջին փոխարժեքները

	31/12/2009	31/12/2008
ԱՄՆ դոլար/USD	377.89	306.73
Եվրո/EUR	542.23	435.00
Ռուսական ռուբլի/RUR	12.50	10.46

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության արտարժույթային գործարքներից և փոխարկումից զուտ եկամուտ հոդվածում:

## Հարկեր

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը:

Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, երբ Կազմակերպությունը՝

- ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարների հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք;
- մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ;
- հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

ՀՀ-ում կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ գործառնական ծախսեր» ծանոթագրությունում:

## Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության առումով դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են բանկերում ընթացիկ հաշիվներից:

## **Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ**

Իր բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

### **Ֆինանսական գործիքներ**

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ համապատասխանաբար գումարած կամ հանած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները: Նշված հոդվածների գծով հետագա վերաչափումների հետ կապված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը նկարագրված է համապատասխան ծանոթագրություններում:

Կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա:

- *Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահից:

- *Վաճառքի համար մատչելի*

Վաճառքի համար մատչելի ներդրումները այն ներդրումներն են, որոնք Կազմակերպությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի, փոխարժեքների և կապիտալ գործիքների արժեքների փոփոխություններից:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հետագայում հաշվառվում են իրական արժեքով: Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք առաջանում են: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը: Վաճառքի համար մատչելի կապիտալ գործիքների գծով շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Կազմակերպությունն իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է դրանց գնանշված շուկայական գների վրա: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ գեղջված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են սկզբնական արժեքով հանած արժեզրկումից կորուստները:

*- Վարկեր և դեբիտորական պարտքեր, ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ*

Վարկերը, ֆինանսական վարձակալությամբ ստացվելիք գումարները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված մարման ժամկետով հաճախորդներին տրված վարկերն ու փոխատվությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները: Ֆինանսական վարձակալությունից եկամուտը բաշխվում է վարձակալության ժամկետի ընթացքում ըստ ժամանակաշրջանների այնպես, որ ապահովի հատուցման ամփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված գուտ ներդրումների նկատմամբ:

Ակտիվները որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող ակտիվները կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

*- Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր*

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Կազմակերպությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Կազմակերպության կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող էական գումարի ակտիվների վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների, որոնք ներառում են նաև առևտրական նպատակով պահվող պարտավորությունները, հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով:

**Հետգնման պայմանագրեր**

Հետգնման պայմանագրերը Կազմակերպության կողմից օգտագործվում են իր առևտրային գործունեության և դրամական միջոցների ընթացիկ կառավարման շրջանակներում: Նշված գործարքները դիտվում են որպես արժեթղթերի ապահովվածությամբ միջոցների ներգրավում:

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի արժեթղթեր, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածներում:

Հետգնման պայմանագրով ձեռքբերված արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ հողվածներում:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին: Այս դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են համապատասխան հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում:

### **Վարձակալություն**

Ֆինանսական վարձակալությունը, որը արտացոլում է կազմակերպության սեփական ակտիվներին բնորոշ բոլոր իրավունքներն ու պարտավորությունները, ճանաչվում է որպես ակտիվ և պարտավորություն այն գումարով, որը վարձակալության սկզբում հավասար է վարձակալված գույքի իրական արժեքին կամ վարձակալական նվազագույն վճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է:

Ֆինանսական եկամուտը բաշխվում է վարձակալության ժամկետի ընթացքում ըստ ժամանակաշրջանների այնպես, որ ապահովի հատուցման ամփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված գուտ ներդրումների նկատմամբ:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունների առումով, ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքը ներկայացված է վարձակալության գծով ստացվելիք գումարներ հողվածում:

Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

### **Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ**

Ֆինանսական ակտիվը արժեգրված է, եթե նրա հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա են օբյեկտիվ փաստեր, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է լինել արժեգրված: Ցանկացած մնացած հայտանիշների առկայության դեպքում ամորտիզացված կամ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեգրվումից կորուստը ճանաչվում է հետևյալ կերպ.

- *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ*

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (ներառյալ երաշխիքների իրագործումից և գրավների իրացումից փոխհատուցվող գումարները) ներկա արժեքի միջև տարբերություն:

Հատուկ պահուստը ձևավորվում է ռիսկային ակտիվների մանրամասն գնահատման արդյունքում: Ի լրումն, ընդհանուր պահուստի գումարները ձևավորվում են այն ռիսկերի նվազեցման նպատակով, որոնք թեև հատուկ ձևով բացահայտված չեն, սակայն գոյություն ունեն վարկային կազմակերպությունների ակտիվների ցանկացած պորտֆելում: Ակտիվներ կորուստների գծով պահուստի գումարի ընդհանուր փոփոխությունը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ղեկավարության կողմից պահուստի գումարի գնահատումը կատարվում է ելնելով անցյալում կորուստներ ունենալու Կազմակերպության փորձից, ՀՀ ԿԲ պահանջներից, պորտֆելին ներհատուկ և նրանում գոյություն ունեցող ռիսկերից, բացասական բնույթի իրավիճակներից, որոնք կարող են ազդեցություն թողնել մարելու հնարավորությունների վրա, ինչպես նաև ապավանքություն հանդիսացող գրավի գնահատված արժեքից և ընթացիկ տնտեսական պայմաններից:

Ակտիվների հնարավոր կորուստների գումարի գնահատումը նախատեսում է որոշակի դատողություններ: Այն դեպքում, երբ հնարավոր է դառնում, որ Կազմակերպությունը կոնկրետ ժամանակաշրջանում կարող է ունենալ որոշակի կորուստներ, որոնք հիմք են հանդիսանում պահուստի ձևավորման համար, ակտիվների պորտֆելին բնորոշ վնասներն հատուցելու համար բավականաչափ պահուստի գումարի որոշումը իրականացվում է ղեկավարության կողմից կատարվող համապատասխան դատողությունների հիման վրա:

Երբ ակտիվի գումարը դառնում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում համապատասխան պահուստի հաշվին: Եթե պահուստին հատկացումներ կատարելուց հետո տեղի ունեցող դեպքերի արդյունքում պարզ է դառնում, որ հնարավոր կորուստի գումարը փոքրանում է, ապա համապատասխան պահուստի հակադարձման գումարը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

- *Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ*

Եթե իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով վնասը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում և առկա է օբյեկտիվ վկայություն, որ ակտիվն արժեզրկված է, ապա կուտակված գուտ վնասը, որը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում, հանվում է սեփական կապիտալից և ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, նույնիսկ, երբ ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել:

**Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը`

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ	1	100%
Գույք և սարքավորումներ	5	20%
Փոխադրամիջոցներ	5	20%
Այլ հիմնական միջոցներ	5	20%

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս` դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները` ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվում է գործառնական եկամուտներում:

**Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին**

Կազմակերպությունում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը պետական սոցիալական ապահովագրության հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

**Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ**

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Պահուստը ճանաչվում է, երբ Կազմակերպությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն` որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով հնարավոր կորուստների պահուստի ստեղծման ընթացակարգը համապատասխանում է հաճախորդներին տրամադրված վարկերի և

փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ընթացակարգին, որը նկարագրված է «Հնարավոր կորուստների պահուստ» բաժնում:

**Համադրելի տեղեկատվություն**

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

**Ծանոթագրություն 3. «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»**

	2009թ.	2008թ.
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից	91,919	16,768
Տոկոսային եկամուտներ դրամական շուկայում ներդրումներից	-	-
Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից	-	-
Ֆինանսական վարձակալություն	977,121	698,270
Տոկոսային եկամուտներ ներդրումներից	-	-
Այլ տոկոսային եկամուտ	18,697	12,677
	<b>1,087,737</b>	<b>727,715</b>

**Ծանոթագրություն 4. «Տոկոսային և նմանատիպ ծախսեր»**

	2009թ.	2008թ.
Տոկոսային ծախսեր դրամական շուկայի փոխառությունների դիմաց	313,244	224,966
Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց	-	-
Այլ տոկոսային ծախս	3,429	642
	<b>316,673</b>	<b>225,608</b>

**Ծանոթագրություն 5. «Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից-զուտ շահույթ/(վնաս)»**

	2009թ.	2008թ.
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների վաճառքից զուտ շահույթ/(վնաս),	-	-
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների վերագնահատումից զուտ շահույթ/(վնաս):	-	-
	<b>-</b>	<b>-</b>

**Ծանոթագրություն 6. «Վաճառքի նպատակով ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)»**

	2009թ.	2008թ.
Վաճառքի համար նախատեսված ներդրումների վաճառքից զուտ շահույթ/ (վնաս)	-	-
Վաճառքի համար ներդրումների վերագնահատումից զուտ շահույթ/ (վնաս)	-	-
	<b>-</b>	<b>-</b>

**Ծանոթագրություն 7. «Արտարժույթային գործառնություններից ստացված զուտ շահույթ/(վնաս)»**

	2009թ.	2008թ.
Արտարժույթի վաճառքից ստացված զուտ շահույթ	(7,200)	(2,918)
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ վնաս	38,277	6,588
	<b>31,077</b>	<b>3,670</b>

**Ծանոթագրություն 8. «Այլ գործառնական եկամուտ»**

	2009թ.	2008թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	12,459	6,055
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	-	-
Արտասովոր եկամուտ	1,430	-
Դրամաշնորհ*	7,695	25,568
Այլ եկամուտ	47,109	46,097
	<b>68,693</b>	<b>77,720</b>

\* Դրամաշնորհը ստացված է Դիվելօփմենթ Օլթերնըթիվ Ինկ-ի (DAI) կողմից Հայաստանում մասնավոր սեփականություն հանդիսացող առևտրային լիզինգային ընկերության զարգացմանն ուղղված ծրագրի աջակցության շրջանակներում:

**Ծանոթագրություն 9. «Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված զուտ մասհանումներ»**

	2009թ.	2008թ.
<b>Տեղաբաշխված բանկային հաշիվների և ավանդների գծով</b>	X	X
Սկզբնական մնացորդ	8,125	4,530
Պահուստին մասհանումներ/(հակադարձում)	14,391	3,595
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	<b>22,516</b>	<b>8,125</b>
<b>Տեղաբաշխված վարկերի գծով</b>	X	X
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին մասհանումներ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-
<b>Ֆինանսական վարձակալության գծով</b>		
Սկզբնական մնացորդ	116,708	26,721
Պահուստին մասհանումներ	23,765	77,086
Պահուստի օգտագործում	(7,249)	12,901
Վերջնական մնացորդ	<b>133,224</b>	<b>116,708</b>
<b>Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով</b>	X	X
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին մասհանումներ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
Վերջնական մնացորդ	-	-



<b>Գերիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով</b>	X	X
Սկզբնական մնացորդ	3,211	3,176
Պահուստին մասհանումներ	22	35
Պահուստի օգտագործում	(98)	-
<b>Վերջնական մնացորդ</b>	<b>3,135</b>	<b>3,211</b>
<b>Ընդամենը ակտիվների գծով մասհանումներ հետհաշվեկշռային հոդվածների գծով</b>	X	X
Սկզբնական մնացորդ	-	-
Պահուստին մասհանումներ	-	-
Պահուստի օգտագործում	-	-
<b>Վերջնական մնացորդ</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Ընդամենը ակտիվների գծով</b>	X	X
Սկզբնական մնացորդ	128,044	34,427
Պահուստին մասհանումներ/(հակադարձում)	38,178	80,716
Պահուստի օգտագործում/(նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ)	(7,347)	12,901
<b>Վերջնական մնացորդ*</b>	<b>158,875</b>	<b>128,044</b>

Ընդամենը ակտիվների հնարավոր կորուստների մասհանումներ/(հակադարձում)	38,178	80,716
<b>Հաշվեգրված, բայց չհավաքագրված տոկոսներ</b>	24,671	16,746
<b>Ընդամենը մասհանումներ</b>	<b>62,849</b>	<b>97,462</b>

\* Ակտիվների հնարավոր կորուստների պահուստի մնացորդը 31.12.09 կազմել է 158,875 հազ. դրամ (31.12.08՝ 128,044 հազ.դրամ) :

**Ծանոթագրություն 10. «Ընդհանուր վարչական ծախսեր»**

	2009թ.	2008թ.
Ծախսեր անձնակազմի գծով	189,794	155,732
Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին	11,713	9,912
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	59	103
Գործուղման ծախսեր	32	923
Նյութական ակտիվների վերանորոգման և պահպանման ծախսեր	32	1,475
Գրասենյակային ծախսեր	532	699
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	2,258	1075
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	4,000	3,917
Հարկեր, բացառությամբ շահութահարկից	40,677	47,813
Անձնակազմի ուսուցման ծախսեր	45	1,315
Տրանսպորտային ծախսեր	605	777
Ապահովագրության գծով ծախսեր	3,712	3,785
Այլ ծախսեր	-	-
	<b>253,459</b>	<b>227,526</b>

Աշխատողների միջին թվաքանակը առ 31 դեկտեմբեր 2009թ. կազմել է 14 մարդ (2008թ.-ին՝ 15 մարդ)։

**Ծանոթագրություն 11. «Այլ գործառնական ծախսեր»**

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Վճարված տույժեր և տուգանքներ	194	300
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	7,731	6,850
Ֆակտորինգի գծով ծախսեր	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	4,559	5,590
Արտասովոր ծախսեր	-	-
Եշաշխիքների գծով ծախսեր	-	905
Այլ ծախսեր	8,332	832
	<b>20,816</b>	<b>14,477</b>

**Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»**

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Ընթացիկ հարկ	98,731	43,541
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկ	159	286
Հետաձգված հարկ	1,130	4,617
	<b>100,020</b>	<b>48,444</b>

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20%:

ՀՀ հարկային օրենսդրության և ՀՀՀՀՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների ընթացիկ արժեքների միջև հանգեցնում է հարկման և ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով ժամանակավոր տարբերությունների առաջացմանը: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
<i>Շահույթը/(վնասը) մինչև հարկումը</i>	524,968	237,905
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	104,994	47,581

**Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով**

(Դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	(7,655)	(1,317)
Չնվազեցվող ծախսեր	2,522	1,894
Այլ ոչ ժամանակավոր տարբերություններ (նախորդ տարվա շահույթի ճշգրտում)	159	286
Գնահատված հարկային ակտիվի ազդեցությունը	-	-
<b>Շահութահարկի գծով ծախս/եկամուտ</b>	<b>100,020</b>	<b>48,444</b>

**Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ**

	<u>2009թ.</u>	<u>2008թ.</u>
<b><u>Հետաձգված հարկային ակտիվներ</u></b>		
Հետաձգված եկամուտ	1,135	2,674
Կրեդիտորական պարտքեր	2,271	1,860
Փոխանցվող հարկային վնաս		-
	<u>3,406</u>	<u>4,534</u>
<b><u>Հետաձգված հարկային ակտիվի գնահատում</u></b>	-	-
	<u>3,406</u>	<u>4,534</u>
<b>Հետաձգված հարկային ակտիվ</b>	<u><u>3,406</u></u>	<u><u>4,534</u></u>

**Ծանոթագրություն 13. «Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ»**

	<u>2009թ.</u>	<u>2008թ.</u>
Կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված վճարային փաստաթղթեր		
<b><u>Բանկային հաշիվներ</u></b>		
ՀՀ բանկեր	112,938	208,336
Ընթացիկ հաշվի մնացորդ*	112,938	208,336
Տեղաբաշխված բանկային հաշիվների և այլ ավանդների գծով պահուստ(ծան. 9)	(1,129)	(2,084)
	<u>111,809</u>	<u>206,252</u>

**Ծանոթագրություն 14. «Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ»**

	<u>2009թ.</u>	<u>2008թ.</u>
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	-	-
Այլ երկրների պետական արժեթղթեր	-	-
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	-	-
Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	-
Ածանցյալ գործիքներ	-	-
Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ(ծան. 9)	-	-
	<u>-</u>	<u>-</u>

**Ծանոթագրություն 15. «Բանկերում տեղաբաշխված միջոցներ»**

	2009թ.	2008թ.
Բանկերում ներդրված ավանդներ		
ՀՀ բանկերում	2,138, 655	604,086
Բանկերին տրված վարկեր և այլ փոխատվություններ		
Տեղաբաշխված բանկային հաշիվների և ավանդների հնարավոր կորուստների ծածկման պահուստ(ծան. 9)	(21,387)	(6,041)
	<b>2,117,268</b>	<b>598,045</b>
Դեպոնացված միջոցներ*	-	-
ՀՀ բանկերում		
Տեղաբաշխված բանկային հաշիվների և ավանդների հնարավոր կորուստների ծածկման պահուստ(ծան. 9)	-	-
	-	-
	<b>2,117,268</b>	<b>598,045</b>

**Ծանոթագրություն 16. «Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ»**

	2009թ.	2008թ.
Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ	-	-
Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և այլ փոխատվություններ	-	-
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ (ծան.9)	-	-
	-	-

**Ծանոթագրություն 17. «Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ»**

	2009թ.	2008թ.
Տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ	-	-
Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ (ծան.9)	-	-
	-	-

**Ծանոթագրություն 18. «Վաճառքի համար նախատեսված ներդրումներ»**

	2009թ.	2008թ.
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր	-	-
Այլ երկրների պետական արժեթղթեր	-	-
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	-	-
Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	-
Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով կորուստ(ծան.9)	-	-
	-	-

**Ծանոթագրություն 19. «Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»**

	2009թ.	2008թ.
Ստացվելիք շահաբաժիններ	-	-
Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Երաշխիքներ	-	-
Հեջավորման ածանցյալ գործիքներ	-	-
Ստացվելիք այլ գումարներ	7,099	5,824
Չճանաչված եկամուտ	(556)	(55)
Գեքիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ(ծան.9)	(78)	(65)
	<b>6,465</b>	<b>5,704</b>

**Ծանոթագրություն 20 «Վարձակալության գծով ստացվելիք գումարներ».**

	2009թ.	2008թ.
<b><u>Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ (ստացվելիք գումարներ)</u></b>	<b>6,696,933</b>	<b>6,231,362</b>
այդ թվում ըստ մարման ժամկետների ոչ ուշ, քան մեկ տարի	2,485,458	2,186,667
մեկ տարուց հետո, բայց ոչ ուշ, քան հինգ տարի	4,211,475	4,044,695
հինգ տարուց հետո		-
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ֆինանսական եկամուտ	(1,516,142)	(1,567,434)
Չճանաչված տոկոսային եկամուտներ	(15,299)	(12,656)
<b><u>Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ</u></b>	<b>5,165,492</b>	<b>4,651,272</b>
Ֆինանսական վարձակալության գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 9)	(133,224)	(116,708)
<b>Ընհամենը հաշվեկշռային արժեքը,</b> այդ թվում ըստ մարման ժամկետների`	<b>5,032,268</b>	<b>4,534,564</b>
Ֆինանսական վարձակալության ենթադրվող տոկոսադրույքը 2009թ-ին կազմել է 18,4% (2008թ-ին՝ 18.1%)		

**Ծանոթագրություն 21. «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»**

	2009թ.	2008թ.
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր, այդ թվում անվանական արժեք	-	-
զեղչատոկոս	-	-
Այլ երկրների պետական արժեթղթեր	-	-
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր	-	-
Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	-
Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ(ծան.9)	-	-
	<b>-</b>	<b>-</b>

**Ծանոթագրություն 22. «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»**

<b>Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ</b>	<b>Համակարգչային սարքավորում</b>	<b>Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ</b>	<b>Ընդամենը</b>
<b>Շահագործման մեջ գտնվող ակտիվներ</b>			
<b>Հաշվեկշռային արժեք</b>	X	X	X
Նախորդ տարվա վերջի տվյալները	10,246	11,786	22,032
Ավելացում	499	545	1,044
Օտարում	2,138	424	2,562
Ընթացիկ տարվա վերջի տվյալները	8,607	11,907	20,514
<b>Մաշվածք</b>	X	X	X
Սկզբնական մնացորդ	8,260	6,066	14,326
Կուտակված ամորտիզացիա	2,205	2,354	4,559
Դուրսգրում	2,138	414	2,552
Վերջնական մնացորդ	8,327	8,006	16,333
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>	X	X	X
Նախորդ տարվա վերջ	1,986	5,720	7,706
Ընթացիկ տարվա վերջ	280	3,901	4,181
<b>Շահագործումից դուրս ակտիվներ</b>			
<b>Հաշվեկշռային արժեք</b>	X	X	X
Նախորդ տարվա վերջի տվյալները	-	-	-
Ավելացում	-	-	-
Օտարում	-	-	-
Ընթացիկ տարվա վերջի տվյալները	-	-	-
<b>Մաշվածք</b>	X	X	X
Սկզբնական մնացորդ	-	-	-
Կուտակված ամորտիզացիա	-	-	-
Կուտակված արժեզրկում	-	-	-
Վերջնական մնացորդ	-	-	-
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>	X	X	X
Նախորդ տարվա վերջ	-	-	-
Ընթացիկ տարվա վերջ	-	-	-
<b>Ընդամենը հիմնական միջոցների հաշվեկշռային արժեք</b>			
Նախորդ տարվա վերջ	1,986	5,720	7,706
Ընթացիկ տարվա վերջ	280	3,901	4,181

**Ծանոթագրություն 23. «Ստացվելիք տոկոսներ»**

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Հաշվեգրված ստացվելիք տոկոսներ բանկերից	9,864	2,711
Հաշվեգրված ստացվելիք այլ տոկոսներ	1,734	248
Չճանաչված տոկոսային եկամուտ	-	-
	<b>11,598</b>	<b>2,959</b>

**Ծանոթագրություն 23.1 «Վճարվելիք տոկոսներ»**

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Հաշվեգրված վճարվելիք տոկոսներ բանկերից ստացված վարկեր և այլ փոխառությունների դիմաց	45,627	60,199
Հաշվեգրված տոկոսներ Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և այլ փոխառությունների դիմաց	13,604	11,957
	<b>59,231</b>	<b>72,156</b>

**Ծանոթագրություն 24. «Այլ ակտիվներ»**

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Գերիտորական պարտքեր և կանխավճարներ	305,735	314,686
Գերիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ(ծան. 9)	(3,057)	(3,146)
Արագամաշ առարկաներ	36	31
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	-	-
Այլ ակտիվներ	-	-
	<b>302,714</b>	<b>311,571</b>

**Ծանոթագրություն 25. «Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր»**

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Բանկերից ներգրաված փոխառություններ	-	-
Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ	4,495,735	3,008,328
	<b>4,495,735</b>	<b>3,008,328</b>

**Ծանոթագրություն 26. «Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ»**

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառություններ	755,780	613,460
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և այլ փոխառություններ	-	102,244
	<b>755,780</b>	<b>715,704</b>

**Ծանոթագրություն 27. «Հաճախորդներից ներգրավված փոխառություններ»**

	2009թ.	2008թ.
Ներգրավված ցպահանջ փոխառություններ	-	-
Ներգրավված ժամկետային փոխառություններ	-	-
Ռեպո համաձայնագրեր հաճախորդների հետ	-	-
	-	-

**Ծանոթագրություն 28. «Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր»**

	2009թ.	2008թ.
Առանց տոկոսի արժեթղթեր	-	-
Տոկոսային արժեթղթեր	-	-
Թողարկված այլ արժեթղթեր	-	-
	-	-

**Ծանոթագրություն 29. «Վճարվելիք գումարներ»**

	2009թ.	2008թ.
Վճարման ենթակա շահաբաժիններ	-	-
Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	-
Այլ վճարվելիք գումարներ	-	-
	-	-

**Ծանոթագրություն 30. «Այլ պարտավորություններ»**

	2009թ.	2008թ.
Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով	-	-
Կրեդիտորական պարտքեր	88,318	35,592
Այլ պարտավորություններ	113,018	186,876
	<b>201,336</b>	<b>222,468</b>

**Ծանոթագրություն 31. «Կանոնադրական կապիտալ»**

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 1,175,215 հազ. ՀՀ դրամ, (2008թ.` 1,175,215 հազ. ՀՀ դրամ) : Համաձայն Կազմակերպության կանոնադրության` բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 200 բաժնետոմսերից` յուրաքանչյուրը 5,876 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով: Թողարկված բոլոր բաժնետոմսերը լրիվ վճարված են: Թողարկված, բայց չտեղաբաշխված, տեղաբաշխված, սահայն չվճարված, հետ գնված բաժնետոմսեր չկան :



2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության բաժնետերերն են.

	Գրանցման երկիր	Վճարված բաժնետ. կապիտալ	%	Բաժնետոմսերի քանակը
«ԱԳԲԱ ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈՒԲԱՆԿ» ՓԲԸ	ՀՀ	634,616	54	108
Կրեդիտ Ագրիքոլ Լիզինգ ԲԸ	Ֆրանսիա	446,582	38	76
Ստեփան Գիշյան	ՀՀ	94,017	8	16
		<b>1,175,215</b>	<b>100</b>	<b>200</b>

2008թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության բաժնետերերն նույն էին :

**Ծանոթագրություն 32. «Վերագնահատման պահուստներ»**

	2009թ.	2008թ.
Վաճառքի համար նախատեսված ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս	-	-
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	-	-
Այլ պահուստներ	-	-
	-	-

**Ծանոթագրություն 33. «Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն»**

2009թ.

	Մինչև 1 ամիս	1 - 3 ամիս	3 - 6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	5 տար ուց ավել	Չաշխատող		Ընդամենը
							Ժամկետանց	Ժամկետանց	
<b>Ակտիվներ</b>									
Պահանջներ բանկերի նկատմամբ	171,209	1,777,335	211,233	69,300	-	-	-	-	2,229,077
Ֆին.վարձակալության գծով ստացվ.գումարներ	210,818	265,682	392,189	779,124	3,209,645	-	11,467	163,343	5,032,268
	<b>382,027</b>	<b>2,043,017</b>	<b>603,422</b>	<b>848,424</b>	<b>3,209,645</b>	<b>-</b>	<b>11,467</b>	<b>163,343</b>	<b>7,261,345</b>
<b>Պարտավորություններ</b>									
Պարտավորություններ բանկերի նկատմամբ		150,000	431,874	1,754,489	2,159,372	-	-	-	4,495,735
Պարտավորություններ ֆին կազմ. նկատմամբ					755,780	-	-	-	755,780
		<b>150,000</b>	<b>431,874</b>	<b>1,754,489</b>	<b>2,915,152</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>5,251,515</b>

2008թ.

	Մինչև 1 ամիս	1 – 3 ամիս	3 - 6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	5 տար ուց ավել	Չաշխատող		Ընդամենը
							Ժամկե- տանց	Ժամկե- տանց	
<b>Ակտիվներ</b>									
Պահանջներ բանկերի նկատմամբ	652,466	151,831	-	-	-	-	-	-	804,297
Ֆին.վարձակալության գծով ստացվ.գումարներ	157,557	199,043	295,932	603,518	2,994,971	-	8,766	274,777	4,534,564
	<b>810,023</b>	<b>350,874</b>	<b>295,932</b>	<b>603,518</b>	<b>2,994,971</b>	-	<b>8,766</b>	<b>274,777</b>	<b>5,338,861</b>
<b>Պարտավորություններ</b>									
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	306,730	251,123	175,274	2,275,201	-	-	-	3,008,328
Պարտավորություններ ֆին կազմ. նկատմամբ	-	-	102,244	-	613,460	-	-	-	715,704
	-	<b>306,730</b>	<b>353,367</b>	<b>175,274</b>	<b>2,888,661</b>	-	-	-	<b>3,724,032</b>

Ծանոթագրություն 34. «Արտարժույթային գանձույթ»

2009թ.

	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանափակ փոխարկելի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ	2,365,296	5,224,413	-	7,589,709
Պարտավորություններ	280,740	5,231,342	-	5,512,082
<b>Զուտ արտարժույթային դիրք</b>	<b>2,084,556</b>	<b>(6,929)</b>	-	<b>2,077,627</b>

2008թ.

	Դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ	Սահմանափակ փոխարկելի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ	2,011,845	3,654,996	4,494	5,671,335
Պարտավորություններ	436,692	3,581,964	-	4,018,656
<b>Զուտ արտարժույթային դիրք</b>	<b>1,575,153</b>	<b>73,032</b>	<b>4,494</b>	<b>1,652,679</b>

Ծանոթագրություն 35. «Տոկոսադրույքի ռիսկ»

	Ժամկետանց և չաշխատող		Մինչև 1 ամիս		1-ից 3 ամիս		3 ամսից 1 տարի		1 տարուց ավելի	
	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի	նախորդ տարի	ընթացիկ տարի
Ներգրավված միջոցներ	-	-	-	-	306,730	150,000	528,641	2,186,364	2,888,661	2,915,151
Դրամով	-	-	-	-	-	150,000	200,000	-	150,000	-
Արտարժույթով	-	-	-	-	306,730	-	328,641	2,186,364	2,738,661	2,915,151
Տեղաբաշխված միջոցներ	357,944	259,790	609,236	212,947	354,419	2,449,541	908,535	1,466,509	3,025,224	3,028,298
Դրամով	135,572	162,672	252,284	73,649	83,091	934,756	356,783	586,403	1,011,240	965,055
Արտարժույթով	222,372	97,118	356,952	136,298	271,328	1,514,785	551,752	880,106	2,013,984	2,063,243

**Ծանոթագրություն 36. «Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ»**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Ղեկավարությունը համոզված է, որ Կազմակերպությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

31.12.09թ. դրությամբ Կազմակերպության հանդեպ չկային դատական հայցեր:

Հետևաբար Կազմակերպության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով պահուստավորումներ չեն կատարվել:

**Ծանոթագրություն 37. «Ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային հոդվածների կենտրոնացում»**

Ակտիվների կազմում Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումների (առանց հաշվի առնելու հնարավոր կորուստների պահուստի գումարը) վերլուծությունն ըստ ոլորտների ունի հետևյալ տեսքը.

	2009թ.	%	2008թ.	%
Արդյունաբերություն	849,076	16.4	893,593	19.2
Գյուղատնտեսություն	81,079	1.6	101,852	2.2
Տրանսպորտ և կապ	2,444,200	47.3	2,199,247	47.3
Շինարարություն	366,245	7.0	201,214	4.3
Սպասարկման ոլորտ	484,611	9.5	341,712	7.4
Առևտուր	877,361	17.0	809,046	17.4
Ֆինանսական սեկտոր	-	-	-	-
Առողջապահություն	53,705	1.0	71,480	1.5
Այլ	9,215	0.2	33,128	0.7
	<b>5,165,492</b>	<b>100</b>	<b>4,651,272</b>	<b>100</b>

Ակտիվների կազմում Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումների (առանց հաշվի առնելու հնարավոր կորուստների պահուստի գումարը) վերլուծությունն ըստ աշխարհագրական տեղաբաշխման ունի հետևյալ տեսքը.

ՀՀ մարզերի	2009թ.	%	2008թ.	%
Երևան	3,673,367	71.1	3,265,612	70.2
Արարատ	310,030	6.0	214,612	4.5
Կոտայք	325,257	6.3	323,688	7.0
Արմավիր	224,089	4.3	168,820	3.6
Արագածոտն	69,060	1.3	102,610	2.2
Շիրակ	56,300	1.1	67,553	1.5
Լոռու	226,715	4.4	260,258	5.6
Գեղարքունիքի	102,098	2.0	90,300	1.9
Տավուշ	23,072	0.4	33,351	0.7
Վայոց Ձոր	8,604	0.2	1,381	0.1
Սյունիք	146,900	2.8	123,087	2.5
	<b>5,165,492</b>	<b>100</b>	<b>4,651,272</b>	<b>100</b>

Գործարքներն իրականացվել են միայն ՀՀ ռեզիդենտների հետ և ըստ հաճախորդների ներկայացվում են ստորև.

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Բանկեր	-	-
Պետական ոչ առևտրային կազմակերպություններ	-	4,308
Մասնավոր ձեռնարկություններ	4,843,350	4,118,664
Անհատ ձեռնարկատերեր	275,177	461,307
Ֆիզիկական անձինք	46,965	66,993
	<b>5,165,492</b>	<b>4,651,272</b>
Ֆինանսական վարձակալության գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 9)	(133,224)	(116,708)
	<b>5,032,268</b>	<b>4,534,564</b>

Ակտիվների կազմում մատակարարներին կատարված կանխավճարների (առանց հաշվի առնելու հնարավոր կորուստների պահուստի գումարը) վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
<b>ՀՀ /ռեզիդենտ/ մատակարարներ</b>	18,151	41,728
<b>Արտասահմանյան /ոչ ռեզիդենտ/ մատակարարներ</b>	264,714	242,658
	<b>282,865</b>	<b>284,386</b>

Ակտիվների կազմում բանկերում ընթացիկ հաշիվների և ժամկետային ավանդների (առանց հաշվի առնելու հնարավոր կորուստների պահուստի գումարը) վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
<b>Հաշիվներ բանկում</b>		
<b>Հաշվարկային հաշիվներ բանկում</b>	112,938	208,336
<b>Ավանդներ բանկում</b>	2,138,655	604,086
	<b>2,251,593</b>	<b>812,422</b>

Պարտավորությունների կազմում ներգրավված միջոցները ներկայացվում են ըստ հետևյալ խմբերի՝

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ	4,495,735	3,008,328
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և այլ փոխառություններ	755,780	715,704
	<b>5,251,515</b>	<b>3,724,032</b>

Արտահաշվեկշռային հոդվածների կենտրոնացման վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Կազմակերպությունը չունի արտահաշվեկշռային պայմանական պարտավորություններ:

#### **Ծանոթագրություն 38. «Գրավադրված ակտիվներ»**

2009թ և 2008թ. «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ գրավադրված ակտիվներով ապահովված պարտավորություններ չունի:

**Ծանոթագրություն 39. «Կապակցված կողմեր»**

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Կազմակերպության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված և նրանց կողմից վերահսկվող այլ անձիք և կազմակերպությունները:

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են հաշվարկային հաշիվները, վարկերը, ավանդները և բաժնետեր կազմակերպությունների հետ այլ գործարքները:

2009թ. և 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության հետ կապված կողմերի գործարքների գծով առկա են հետևյալ մնացորդները.

<b>Հաշվարկային հաշիվներ բանկում</b>	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Մնացորդը առ 1 հունվարի	<b>208,336</b>	<b>270,467</b>
Տարվա ընթացքում ավելացում	16,848,834	9,678,245
Տարվա ընթացքում նվազում	(16,944,232)	9,678,245
	<b>112,938</b>	<b>208,336</b>
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	<b>112,938</b>	<b>208,336</b>
Տոկոսային եկամուտ	1,746	-

2009թ և 2008թ. դեպոնացված կամ սառեցված գումար չկա:

Կապակցված կողմ հանդիսացող բանկում հաշվարկային հաշիվների հնարավոր կորուստների պահուստի գումարը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,129 հազ. դրամ (2008թ.՝ 2,084 հազ. դրամ):

<b>Ավանդներ բանկում</b>	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Մնացորդը առ 1 հունվարի	<b>604,086</b>	<b>182,532</b>
Տարվա ընթացքում ավելացում	9,260,981	3,095,176
Տարվա ընթացքում նվազում	(7,726,412)	(2,673,622)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի*	<b>2,138,655</b>	<b>604,086</b>
Տոկոսային եկամուտ	<b>90,173</b>	<b>16,768</b>

Կապակցված կողմ հանդիսացող բանկում ավանդների հնարավոր կորուստների պահուստի գումարը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 21,387 հազ. դրամ (2008թ.՝ 6,041 հազ. դրամ):

<b>Պարտավորություններ այլ բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</b>	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Մնացորդը առ 1 հունվարի	<b>1,781,408</b>	<b>1,973,211</b>
Տարվա ընթացքում պարտավորության աճ	-	411,327
Տարվա ընթացքում վճարված գումար	308,793	603,130
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	<b>1,472,615</b>	<b>1,781,408</b>
Տոկոսային ծախս	<b>132,125</b>	<b>169,873</b>

Կապակցված կողմ հանդիսացող բանկի հետ կատարված այլ գործարքների գումարը՝

<b>Գործարքի տեսակը</b>	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Գործառնական վարձակալության գծով ծախսեր*	2,258	1,075
Վարկերի և երաշխիքների տրամադրման միջնորդավճարներ	-	2,257
Արտարժույթի առք ու վաճառքի գծով ծախսեր	7,200	2,918
Հաշվիվների սպասարկման և վճարված այլ միջնորդավճարներ	7,859	17,092
	<b>17,317</b>	<b>23,342</b>

\* Կապակցված կողմ հանդիսացող բանկի հետ կնքված են ընկերության գրասենյակների վարձակալության պայամանագրեր՝

29.45 ք.մ. տարածքի /ք. Երևան, Բայրոնի-1/ վարձակալության պայամանագիր՝ 5 տարի ժամկետով, մինչև դեկտեմբեր 2013թ.

56.8 ք.մ. տարածքի /ք. Երևան, Դավիթաշեն I ք. 42/2/ վարձակալության պայամանագիր՝ 5 տարի ժամկետով, մինչև նոյեմբեր 2013թ.

2009թ. կազմակերպության ղեկավարությանը վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների ընդհանուր գումարը կազմում է 147,184.3 հազ. դրամ (2008թ.՝ 112,435.9 հազ. դրամ), համապատասխանաբար գարծատուի պարտադիր սոց. վճարումների գումարը կազմում է 12,432.8 հազ. դրամ (2008թ.՝ 6,293.7 հազ. դրամ): 2008թ. և 2009թ. կազմակերպության խորհրդի անդամների կողմից խորհրդի նիստերին մասնակցության համար կատարված ծախսեր չեն եղել: Այլ վճարումներ 2009թ. և 2008թ. չեն եղել:

**Ծանոթագրություն 40. « Հիմնական տնտեսական նորմատիվներ »**

<b>Նորմատիվներ</b>	<b>Փաստացի մեծությունը 31/12/2009</b>	<b>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը</b>
<u>1</u>	<u>2</u>	<u>3</u>
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	1,175,215	100,000
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը*	2,038,873	100,000
Ն <sup>1</sup> ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը.	30.3%	8.0%
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	10.7%	25.0%

**Ստեփան Գիշյան**

*Գլխավոր տնօրեն*

**Արմեն Հակոբյան**

*Գլխավոր հաշվապահ*